ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 02
ՀՀՎԱ-ԷԱՃԱՇՁԲ-24/25 ԳՆՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻՑ

ք.Երևան **«30» «նոյեմբերի» 2023թ.,**
ժամը՝ 10:00

Հանձնաժողովի նախագահ՝
Վարչապետի աշխատակազմի սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատարի գրասենյակի ծրագրերի իրականացման և մշտադիտարկման վարչության ծրագրերի մշտադիտարկման բաժնի պետ՝ Գրետա Մնացականյան

Հանձնաժողովի անդամներ՝
Վարչապետի աշխատակազմի սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատարի գրասենյակի ծրագրերի իրականացման և մշտադիտարկման վարչության ծրագրերի իրականացման բաժնի գլխավոր մասնագետ՝ Իսկուհի Ազիզյան

Վարչապետի աշխատակազմի սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատարի գրասենյակի ծրագրերի իրականացման և մշտադիտարկման վարչության ծրագրերի իրականացման բաժնի մասնագետ՝ Լիլիթ Գևորգյան

Հանձնաժողովի քարտուղար՝
Վարչապետի աշխատակազմի գործերի կառավարչության գնումների կազմակերպման բաժնի գնումների ավագ գործակալ՝ Սոնա Շիրինյան

---

1. **«ՀՀՎԱ-ԷԱՃԱՇՁԲ-24/25 ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի վերաբերյալ**

1.1 «ՀՀՎԱ-ԷԱՃԱՇՁԲ-24/25» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգով հայտերի ներկայացման վերջնաժամկետը սահմանված է եղել 2023թ. նոյեմբերի 28-ը ժամը 10:00-ն: Հակադարձ աճուրդը տեղի է ունեցել 2023թ. նոյեմբերի 29-ի ժամը 10:00-ից 11:30-ն՝ **eauction.armeps.am** համակարգի միջոցով:

1.2 Հայտեր են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

N	Մասնակցի անվանումը	Էլ փոստ	Հեռախոս	ՀՎՀՀ
1	Պրինտարմ ՍՊԸ	Printarm1@mail.ru	+374 91 40 25 86	01278508
2	Աննա Սահակյան ԱՁ	atsgnumner@gmail.com	+374 77 44 77 54	25405638
3	Դիջի Պրինտ ՍՊԸ	harutmuradyan@mail.ru	+374 93 68 77 47	01280885

Ընդունվել է որոշում՝ կողմ-3, դեմ-0

2. Տեղեկատվություն հարցումների և պատասխանների վերաբերյալ

2.1 Հարցումներ չեն կատարվել և պարզաբանումներ չեն ներկայացվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ- 3, դեմ-0

3. **Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտի և հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության վերաբերյալ.**

3.1 1-ին, 4-րդ, 6-րդ, 10-րդ, 11-րդ և 12-րդ չափաբաժինների մասով առաջին տեղ զբաղեցրած «Դիջի պրինտ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում հրավերի պահանջներին, մասնավորապես.
3.1.1 գնման ընթացակարգի դիմում-հայտարարության մեջ 1)-ին ենթակետը չի համապատասխանում հրավերի պահանջներին /բացակայում է «իրեն փոխկապակցված անձինք» արտահայտությունը/:
3.2 2-րդ և 13-րդ չափաբաժինների մասով առաջին տեղ զբաղեցրած «Պրինտարմ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են հրավերի պահանջներին:
3.3 3-րդ, 5-րդ, 7-րդ, 8-րդ և 9-րդ չափաբաժինների մասով առաջին տեղ զբաղեցրած «Աննա Սահակյան» ԱՁ-ի կողմից ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում հրավերի պահանջներին, մասնավորապես.
3.3.1 գնման ընթացակարգի դիմում-հայտարարության մեջ բացակայում է «Սույնով «Աննա Սահակյան» ԱՁ-ն հայտարարում և հավաստում է, որ» արտահայտությունը:

Ընդունվել է որոշում՝ կողմ-3, դեմ-0

4. **«ՀՀՎԱ-ԷԱՃԱՇՁԲ-24/25» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի մասին**

<u>Գնահատող հանձնաժողովը որոշեց</u>

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 41-րդ կետը՝ հանձնաժողովը որոշեց նիստը կասեցնել և ծանուցել «Դիջի պրինտ» ՍՊԸ-ին և «Աննա Սահակյան» ԱՁ-ին, որպեսզի մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկեն նշված անհամապատասխանությունները:

Հանձնաժողովի հաջորդ նիստը տեղի կունենա 2023 թվականի դեկտեմբերի 4-ին, ժամը 10:00-ին, ք. Երևան, Կառավարական տուն 1, 226 սենյակ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ-3, դեմ-0

Հանձնաժողովի նիստին ներկա անդամների և քարտուղարի ստորագրությունը

Հանձնաժողովի Նախագահ՝	Գրետա Մնացականյան	
Անդամներ՝	Իսկուհի Ազիզյան	
	Լիլիթ Գևորգյան	
Քարտուղար՝	Սոնա Շիրինյան	